Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format
**Adapt** — remix, transform, and build upon the material

Պրոլետարներ բոլոր յերկրների, միացե՛ք.

334.6
Կ-

# ԿՈՈՊԵՐԱՏԻՎ ԲՅՈՒՐՈՆԵՐԻ ՀԵՐԹԱԿԱՆ ԱՆԵԼԻՔՆԵՐԸ

ԲԱՆԿՈՈՊԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

1930

# ԿՈՈՊԵՐԱՑԻԱ ԲՅՈՒՐՈՆԵՐԻ ՀԵՐԹԱ-ԿԱՆ ԱՆԵԼԻՔՆԵՐԸ

Կոոպերացիան կատարում է հետեւյալ աշխատանքները·

ա) Հրավիրում ե փայատերերի ընդհանուր ժողովներ, վորտեղ քըննության ե դնում ամբողջ կոոպերատիվի և նրա առանձին ձեռնարկությունների աշխատանքների հարցերը, մթերման և մատակարարման պլանները, ցանցի ընդարձակումը, սեփական տնտեսությունները և այլն:

բ) անց ե կացնում զանազան կոոպերատիվ կամպանիաներ (հաշվետու, վերընտրական, և այլն) ու



ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ № 2
ԱԿԱԴԵՄԻԱ

կազմակերպում է փայատերերի մասնակցությունը՝ ձեռնարկության այլ հասարակական որգանների հետ միասին՝ այդ կամպանիաների նըկատմամբ:

գ) Փաբգավտեղկոմների (ցեխբյուրո) առաջ բարձրացնում է կոոպերատիվային խնդիրներ՝ Փաբգավկոմների նիստերին և պրոֆորգանների կողմից գումարած բանվորների և ծառայողների ժողովներին դնելու համար:

դ) կազմակերպում և ղեկավարում է ձեռնարկության կոոպերատիվը, լսում է զեկուցումներ՝ կոոպակտիվների աշխատանքների մասին, անց է կացնում նրանց աշխատանքի ստուգումը և այլն:

ե) լսում է Կ. Բ. Կ. առանձին ձեռ-

նարկությունների վարիչների զե-
կուցումները:

դ) կազմակերպում է սոցմրցում՝ կուսբյուրոյի և ուրիշ ձեռնարկությունների փոստերերի միջև և ըստուգում է սոց. պայմանագրերի կատարումը:

ե) Հավաքում է սիստեմատիզացիայի յե յենթարկում փաստերերի բոլոր առաջավորությունները՝ կոոպերատիվի և նրա առանձին ձեռնարկությունների աշխատանքների կազմակերպման վերաբերյալ (կոոպկազմակերպչի ու ժողովների միջոցով, փորձերի փոխանակության ժամանակ և ստուգական լրագրի միջոցով) միջոցներ է ձեռք առնում այդ իրագործելու կյանքում և հետևանքների մասին ինֆորմացիա յե տալիս թե բանավոր և թե մամուլի միջոցով:

ը) ընդունում և ստուգում է փայատերերի բողոքները՝ կոոպերատիվի աշխատանքի մեջ յեղած թերությունների մասին և անմիջապես միջոցներ է ձեռք առնում՝ վերստուգիչ հանձնաժողովի միջոցով և այլն լիկվիդացիայի յենթարկելու թերությունները:

թ) կազմակերպում է կոոպերատիվային և բանվորական հասարակայնության բոլոր վորոշումների կատարման սիստեմատիկ ստուգում (ընտրողներին նակազ տալ, ժողովների վորոշումներ և այլն) և հաշվետու յե լինում փայատերերի առաջ:

ժ) կազմակերպում է փայատերերից հարվածային բրիգադներ՝ պայքարելու իր ձեռնարկության արտադրանքի վորակի համար, ինչպես հավաքում է փայատերերի առաջա-

դրանքները՝ ապրանքների վորակի հարցերի առթիվ, կոոպերատիվ ձեռնարկություններում և միջոցներ է ձեռք առնում կյանքում կիրառելու այդ առաջադրությունները՝ գնելով այդ Կ. Ի. Կ. Վարչության և Հասարակության առաջ:

Հաշվի չէ առնում կոոպերատիվից թեկնածուներ առաջքաշման համար՝ կոոպղեկավար աշխատանքներում՝ նախորոք համաձայնեցնելով համապատասխան մարմինների հետ:

Կազմակերպում է ինֆորմացիա բարձրագույն կոոպմարմինների վորոշումների վերաբերյալ, կազմակերպում է ինֆորմացիոն բացատրական աշխատանք իր հիմնարկում, նամանավանդ նորմիրովկայի յենթարկված ապրանքների շուրջը, փայավճարների մուծման և փայատերերի արտոնությունների:

Լուսաբանում է պատի թերթում և մամուլում իրենց աշխատանքները և կոոպշինարարության խնդիրները՝ մասնակից դարձնելով այդ գործում կոոպակտիվը:

Կազմակերպում է կարմիր անկյուն-ներում և ակումբներում կոոպխմ–բակներ. սահմանում է հերթապահու-թյուն կոոպ. բյուրոյի անդամների և ակտիվի մեջ՝ կուլտ–կրթական և բացատրական աշխատանքներ տանե–լու համար:

Ակտիվ մասնակցություն է ցույց տալիս գործարկոմի կուլտ–կրթական աշխատանքներին և նրան հետ հա–մաձայնեցրած՝ կատարում և անց է կացնում կոոպ. կուլտ–կրթական աշխատանքները. գլխավորապես դասախոսություններ, զրույցներ կոոպ. խնդիրների շուրջը, հարց ու

պատասխանի յերեկոներ, ցուցադրա-կան դատեր, էքսկուրսիաներ. կազ-մակերպում է նաև կոոպխմբակներ և ղեկավարում նրանց աշխատանքները:

Տարածում է բանվորների և ծա-ռայողների մեջ կոոպ. գրականու-թյուն, թերթեր և հետևում է ա-կումբի գրադարանի կոոպերատիվ բաժնի կոոպ. գրականության ոգ-տագործմանը:

Մասնակցություն է ցույց տալիս ուրիշ կազմակերպությունների հետ միասին՝ մանկահրապարակներ, մանկապարտեզներ, մանմսուրներ և այլն կազմակերպման գործին ինչ-պես և բանվորների ու ծառայողների ապրած ընդհանուր շենքերում նոր կոլեկտիվացում մտցնելու (ընդհա-նուր լվացարաններ, ճաշարաններ և այլն) կազմակերպման գործին:

Կազմակերպում և խորացնում է աշխատանքը կանանց և յերիտասարդության մեջ՝ ավելի մեծ չափով նրանց կոոպերացիայի շուրջն ընդգրկելու նպատակով։

Հաշվի յե առնում հիմնարկության փայատերերի և վոչ փայատերերի, նրանց փայավճարների դրությունը և ձեռք է առնում անհրաժեշտ միջոցներ՝ փայավճարները ժամանակին գանձելու գործում։

Տանում է աշխատանք նպատակային ավանդների և ավանդների ընդունման գործում, կազմակերպում է դեֆիցիտային ապրանքների որդերների բաշխման գործը և պահպանում է հերթականությունը։

Հետևում է իր հիմնարկին կոոպ. անդամների ժամանակին մասնավճարման գործին. Մասնակցում է ըն-

ների իջեցման աշխատանքներին. մը-շակում է ցանցի լայնացման ծրագիրը, աշխատակիցների նպատակահարմար օգտագործման խնդիրներում իր առաջարկություններով դիմում է կապի վարչությանը և աշխատում է վերացնել այս կամ այն անորմալ երևույթը. կազմակերպելով հատուկ կոնտրոլ բրիգադներ՝ թերությունները հայտաբերելու գործում:

Կապ. բյուրոն սերտ կապ է պահպանում Բանկապի կոմբաժնի հետ՝ սիստեմատիկաբար ինֆորմացիա տալով աշխատանքի ընթացքի մասին և ստանալով նոր հրահանգներ ու ցուցմունքներ:

Այս նշված աշխատանքները վարելու համար, կապ. բյուրոն իր շարքերից առաջադրում է նախագահ և

քարտուղար, իսկ մնացած բյուրոյի անդամների վրա դրվում են հետևյալ աշխատանքները՝

ա) մասսայական կոնտրոլի ղեկավարման գործը (խանութում, ճաշարանում, թեյարանում և այլն).

բ) բրիգադների կազմակերպման գործը.

գ) կազմակերպումն ու ստուգումը՝ կոոպերացման և փայակուտակման աշխատանքների.

դ) ավանսների և ավանդների ընդունման գործը.

ե) կուլտ—կրթական աշխատանքները.

զ) ինֆորմացիա՝ մամուլում կոոպ խնդիրների տարածման գործում.

է) աշխատանքը կանանց և երիտասարդության մեջ.

Ամեն մի կոոպ. բյուրոյի անդամ հաշվետու յե իր վրա դրված աշխատանքի համար բյուրոյի նիստերում, վոր հրավիրվում են վոչ պակաս, քան ամեն 15 որը մեկ անգամ և զեկուցում ե կոոպ. բյուրոյին:

Բոլոր աշխատանքները կիրառում ե կյանքում՝ կոոպակտիվին իր շուրջը համախմբելով և աշխատանքի լծելով: Իր նիստերի որերի մասին նախորոք հայտնում ե նիստի տեղը կոոպակտիվին և Բանկոոպի կազմբաժնին՝ իր աշխատանքների ընթացքում սերտ կապ հաստատելով կոոպ, կուս., պրոֆ., խորհրդային մարմինների հետ:

ԲԱՆԿՈՈՊԻ ԿԱԶՄԲԱԺԻՆ

A 3546

ՀԱՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ № 2 ԱԿԱԴԵՄԻԱ

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.
FL0037882

[014]
50
A I/3546